ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
ФАКУЛЬТЕТ МЕЖДУНАРОДНЫХ ОТНОШЕНИЙ

YEREVAN STATE UNIVERS
FACULTY OF INTERNATION
RELATIONS

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ՀՀ, Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1 ● Республика Армения, Ереван, 0025, Алека Манукяна 1 ● 1 Alex Manoogian, 0025, Yerevan, Republic of Armenia (+374 60) 71-00-78, (+374 60) 71-00-79, int.rel@ysu.am, www.ysu.am

№ 190 «___29___»___01_____2020 թ.

Արձանագրություն N 190

ԵՊՀ Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի գիտական խորհրդի 2020թ-ի հունվարի 29-ի նիստի

Օրակարգ

1. 2019-2020 ուստարվա առաջին կիսամյակի քննաշրջանի արդյունքների ամփոփում /զեկ.՝ դեկան, պրոֆ. Գեղամ Պետրոսյան/:
2. Թեկնածուական ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման հարցը /զեկ.՝ գիտ. քարտուղար Գ. Բալասանյան /:
3. Դոցենտի կոչման դիմումների քննարկում և մրցույթի անցկացում /զեկ.՝ գիտ. քարտուղար Գ. Բալասանյան /:
4. Ընթացիկ հարցեր:

Խորհուրդը որոշեց.

1. 2019-2020 ուստարվա առաջին կիսամյակի քննաշրջանի արդյունքներն ընդունել ի գիտություն:
2. Հաստատել թեկնածուական ատենախոսության հետևյալ թեման.

   ա/ Արցախի պետական համալսարանի ասպիրանտ Ժիրայր Լևոնի Իշխանյանի թեկնածուական ատենախոսության թեմա հաստատել **« Չճանաչված պետությունների հիմնախնդիրը միջազգային իրավունքի և աշխարհաքաղաքական իրողությունների համատեքստում»**, ԻԳ.00.02 – Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ, միջազգային հարաբերություններ մասնագիտությամբ քաղաքական գիտությունների

թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար: Գիտական ղեկավար հաստատել պատմ. գիտ. դոկտոր Դավիթ Բաբայանին:

բ/ ԵՊՀ քաղաքական ինստիտուտների և գործընթացների ամբիոնի ասպիրանտ Նունե Մելքոնյանի թեկնածուական ատենախոսության թեմա հաստատել **«Մուսուլմանական համայնքների ինտեգրման և քաղաքական մասնակցության հիմնախնդիրները արևմտաեվրոպական երկրների օրինակով»** ԻԳ.00.02 – Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ, միջազգային հարաբերություններ մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար: Գիտական ղեկավար հաստատել ք.գ.դ., պրոֆեսոր Գարիկ Քեռյանին:

3. ա/ Ընտրել հաշվիչ հանձնաժողով և քվեաթերթիկում գրանցել դոցենտի կոչման համար ք. գ. թ. Հայկուհի Մկրտչյանի և ք. գ. թ. Միեր Շահգելդյանի անունները:

   բ/ Անցկացնել փակ գաղտնի քվեարկություն: Փակ գաղտնի թվեարկությունից հետո գիտական խորհրդի նիստը հաստատեց հաշվիչ հանձնաժողովի հաշվետվությունը, ըստ որի խորհրդի 28 անդամներից քվեարկությանը մասնակցել են 24-ը և ձայները բաշխվել են հետևյալ կերպ՝

   1. Դոցենտի կոչման համար՝

      Հայկուհի Մկրտչյան – 24 կողմ, դեմ չկա, անվավեր քվեաթերթիկ չկա:

      Միեր Շահգելդյան – 23 կողմ, 1 դեմ, անվավեր քվեաթերթիկ չկա:

Գիտական խորհրդի նախագահ, պրոֆեսոր *Գ. Պետրոսյան*

Գիտական խորհրդի քարտուղար, դոցենտ *Գ. Բալասանյան*